



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«20» 01 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000001

Ձեռնարկողը՝

«Պարս» ՍՊԸ

Ք. Երևան, Ավանետվի նրբ.8/1, բն.16

Գործունեությունը՝

Դավթաշեն վարչական շրջան, Փիրումյանների փողոց 13
հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ

ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000091

<< 20 >> 01 2020թ.

**Դավթաշեն վարչական շրջան, Փիրումյանների փողոց 13 հասցեում
բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝

«Պարս» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Նախնական գնահատման հայտ
Գ կատեգորիա

Տեղադրման վայրը՝

Երևան համայնք, Դավթաշեն վարչական շրջան

Նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի, Փիրումյանների 13 հասցեում:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրը կառուցվելու է անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող 12199.9մ² ընդհանուր մակերեսով հողամասում, Երևանի քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնականը՝ խառը կառուցապատման:

Գործունեության նպատակն է կառուցել շրջակա կառույցներին ներդաշնակ և ՀՀ-ում գործող շինարարական, սանիտարական, հակահրդեհային նորմերին ու պահանջներին համապատասխան ժամանակակից լուծումներով բազմաբնակարան բնակելի համալիր:

Կառուցապատման տարածքին կից գտնվում է Փիրումյանների փողոցը, Արդարադատության Ակադեմիան (18.3 մ), կիսաքանդ միաձույլ երկաթբետոնե կմախքով և պատերով երկհարկանի կիսակառույցը(26.0մ), Անձնագրային Վիզաների Վարչությունը(23.0 մ) և ներբակային ճանապարհներ:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ բնակելի համալիրը կառուցվելու է արդեն իսկ կառուցապատված տարածքում, որտեղ առկա են 3.0 մ բարձրությամբ (4.0x4.0մ) երկու հատ միանման, մետաղական թիթեղյա ծածկերով և թեթև բետոնե բլոկներով շարված կիսակառույց շինություններ: Վերջիններս նախքան շինարարական աշխատանքները քանդվելու են:

Ըստ կատարված հորատման և լաբորատոր ուսումնասիրությունների տվյալների, երկրաբանական կառուցվածքին բնորոշ են հրաբխային ապարների՝ բազալտները, ժամանակակից էյլովիալ-դեյլովիալ առաջացումներով: Գրունտային ջրերը գտնվում են 15մ խորը հորիզոններում: Համաձայն գնահատման հայտի՝ գործունեության նախնական տարածքում բնության և պատմամշակութային հուշարձաններ, մակերևութային ջրային ռեսուրսներ չկան: Պայմանավորված տարածքի կառուցապատված լինելու հանգամանքով, ճարտարապետականության հարմարությունը բացակայում է:



Շինարարական աշխատանքները տևելու են 64 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ օդադողային և թրթուրավոր էքսկավատորներ, աշտարակային ամբարձիչ, բուլդոզեր, վերամբարձ կոունկ, ավտոբետոնախառնիչ, տոփանիչ, ավտոինքնաթափ, էլեկտրական եռակցման սարք և այլն: Շինարարությունը կատարվելու է կապալային եղանակով՝ համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների կողմից: Նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների կատարման ժամանակ օգտագործվելու են շինանյութեր՝ բետոն, ամրան, բլոկ, երեսապատման սալիկներ, ջերմամեկուսիչ նյութեր և այլն: Կառույցի հիմնակմախքը լինելու է կարկասային՝ կազմված միաձույլ բետոնից: Շինարարության համար անհրաժեշտ շաղախը և բետոնը բերվելու են մասնագիտացված տրանսպորտային միջոցներով՝ Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից: Արտադրական հրապարակի մակերեսը կազմելու է 500մ², որտեղ պահեստավորվելու են շինարարության համար անհրաժեշտ նյութերը, կայանվելու են շինարարության համար նախատեսվող հիմնական շինտեխնիկական և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում հանվելու է 58900մ³ ծավալով հողային զանգված, որից 8800մ³-ը ժամանակավոր կուտակվելու և պահվելու է շինհրապարակում՝ հետլիցքի համար օգտագործելու նպատակով: Իսկ մնացած 50100մ³-ը ավտոինքնաթափերով ամբողջությամբ տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր: Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ կենցաղային(24570կգ) և շինարարական աղբի(720 մ³) տեսքով: Գոյություն ունեցող կառույցների քանդումից և շինարարության ընթացքում առաջացած շինարարական աղբը չի կուտակվելու շինհրապարակում, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, իսկ կենցաղային աղբը տեղափոխվելու է արտոնագիր ունեցող աղբահավաք ծառայության կողմից:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների, հողի(գրունտի) ջրցանի, շինանձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար: Ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար: Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերն ուղղորդվելու են շինարարական հրապարակին կից պարզարան(25մ³), որտեղ կատարվելու է մեխանիկական նստեցում: Շինարարության փուլում տեխնիկական և խմելու ջուրը բերվելու է ավտոցիստեռով և տարաներով՝ պայմանագրային հիմունքներով: Աշխատողների կենցաղային պայմանները ապահովելու համար տեղադրվելու են բիոզուգարաններ: Շինարարության փուլում ընդհանուր ջրօգտագործումը կազմելու է 3876,5 մ³/շին.ժամ: Շինարարական աշխատանքների ընթացքում ներգրավվելու են 65 մարդ:

Նախատեսվող համալիրը լինելու է ժամանակակից լուծումներով շինություն՝ ներդաշնակ շրջակա միջավայրի կառույցներին: Կառուցապատման մակերեսը կազմելու է 4526.5մ², իսկ 3545.3մ²-ը զբաղեցնելու են մայրերը, ճեմուղիները, բացօթյա ավտոկայանատեղիները: Համալիրը բաղկացած է լինելու 4 մասնաշենքերից՝ 18 վերգետնյա և 3 ստորգետնյա հարկերով, ունենալու է 612 բնակարան, ստորգետնյա հարկերում՝ 636 ավտոկայանատեղ: Հասարակական տարածքների, ավտոկայանատեղերի և բնակելի տարածքների մուտքերը լինելու են առանձնացված: Բոլոր մասնաշենքերի տանիքները լինելու են հարթ, ներքին ջրահեռացման լուծումներով, որտեղ նախատեսվելու են լողավազաններ, ընդհանուր օգտագործման և կանաչապատ տարածքներ: Շենքերի ճակատները երեսապատվելու են տրավերտինե և բազալտե սալերով:

Բնակելի համալիրն ապահովված է լինելու սառը ջրամատակարարման, կենցաղային կոյուղու, ներքին հակահրդեհային համակարգերով:

Շինարարական աշխատանքների ընթացքում էլեկտրամատակարարումն իրականացվելու է ժամանակավոր տրանսֆորմատորային ենթակայանից: Շահագործման փուլում բնակելի



համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ընկերության հետ նախօրոք կնքված պայմանագրի հիման վրա: Բնակելի համալիրի ջրամատակարարումն իրականացվելու է էլեկտրական սարքերով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատման ընհանուր մակերեսը կազմելու է 6807.3 մ², որից տարածքի կանաչապատում՝ 4128.1մ², ուղղաձիգ կանաչապատում՝ 1056,1 մ², տանիքի կանաչապատում՝ 1623.1 մ²:

Կանաչապատումն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծին համապատասխան: Համաձայն կանաչապատման նախագծի (դենդրոնախագիծ)՝ տարածքում տնկվելու են 6 հատ հուդայաճառ, 50 հատ գնդաձև ակացիա, 23 հատ գնդաձև թույա, 12 հատ սիրիական վարդ, 88 հատ սյունաձև թույա, 8 հատ ոսկեգույն թույա, 4 հատ արծաթափայլ բարդի, 2 հատ կաղնի, 3 հատ հացենի, ընդամենը՝ 196 ծառատեսակներ:

Լինելու են նաև կուսախաղողի(1056մ²), սիզախոտի(5750մ²) և ծաղկանոցի (261մ²)տարածքներ: Կանաչապատման համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը և օգտագործումն իրականացվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է տարածքի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից կամ ջրի ավտոցիստեռնի միջոցով՝ պայմանագրային հիմունքներով: Ոռոգման ջրապահանջը կազմելու է 743մ³/ տարի:

Նախատեսվող գործունեության կատարման ժամանակ լինելու են շրջակա միջավայրի վրա ազդեցություններ, որոնք հիմնականում կապված են լինելու քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում.

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում,

- սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրության թաղանթով,

- շինարարական աշխատանքների ժամանակ շենքի ծածկում համապատասխան ցանցով,

- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,

- շինարարական նյութերի տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,

- բոլոր մեքենաների վրա համապատասխան խլացուցիչների տեղադրում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,

- շինհրապարակում քանդման և շինարարության ընթացքում թափոնների տարանջատում,

- շինարարական տեխնիկայի լիցքավորում և յուղում շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում,

- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը կանխելու նպատակով,

- վտանգավոր արտահոսքերի դեպքում կլանիչ նյութերով անմիջապես մաքրում,



- մթնոլորտային օդ արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով հողերի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,

- արտակարգ իրավիճակների դեպքում աշխատանքի անվտանգության պահպանում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվելու է տարեկան մասհանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում՝ 1750000 հազ. դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. համաձայն նախնական հայտի՝ բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում, կրելու են ժամանակավոր բնույթ: Հայտով նախատեսված միջոցառումների կատարման արդյունքում շրջակա միջավայրի վրա լրացուցիչ ազդեցությունների ավելացում չի լինելու: Դիտողությունների և առաջարկությունների հիման վրա հայտը լրամշակվել է: Փորձաքննական գործընթացին ներգրավվել է Քաղաքաշինության կոմիտեն:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Դավթաշեն 4-րդ թաղամաս 23/4 հասցեում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանն ուղղված:

2. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների բեռնվածությունը:

3. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը:

4. Անհրաժեշտ է ապահովել հայտով ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և պահպանումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պարս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի, Փիրումյանների 13 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ



Թ. Նուրիջանյան